ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԼԵՈՆԻԴ ԱԶԳԱԼԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 200 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Երևան, Եռ I թաղ. azgaldyan_200@mail.ru
Հեռ. 36- 90- 36

05.12.2024թ.

№ 146

ՀՐԱՄԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի Լ. Ազգալդյանի անվան հ. 200 հիմն. դպրոց ՊՈԱԿ-ի և Սանթուրյան Արմեն Կարապետի Ա/Ձ-ի միջև 2024 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված է հ. Ե200ՀԴ-ԳՀԱԾՁԲ-24/01 ծածկագրով կապիտալային աշխատանքների կատարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով սահմանված Ծավալաթերթ-Նախահաշվով նախատեսված Երևանի Լ. Ազգալդյանի անվան հ. 200 հիմն. դպրոցի 3-րդ հարկի դասասենյակների ընթացիկ վերանորոգման N 32, N 33, N 34, N 35, N 38, N 39, N 40 աշխատանքները, համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 Հավելվածի օրացուցային գրաֆիկով նախատեսված պահանջների:

Պայմանագրի 3 կետի 3.1.4 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Կապիտալային աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը սահմանող թիվ 2 Հավելվածով սահմանվում է, որ «21 օրացուցային օրում աշխատանքներն իրականացնել ծավալաթերթ-նախահաշվով ներկայացված ողջ ծավալով», ինչպես նաև Սանթուրյան Արմեն Կարապետի Ա/Ձ-ն գրությամբ դիմել է Երևանի Լ. Ազգալդյանի անվան հ. 200 հիմն. դպրոց ՊՈԱԿ-ի տնօրենին, որպեսզի համաձայնագրով

ևս 21 օրացուցային օր երկարաձգել աշխատանքների կատարումը, սակայն կրկին ժամկետներում չի իրականացվել աշխատանքների կատարումը:

Տեղեկացնում ենք, որ Սանթուրյան Արմեն Կարապետի Ա/Ձ-ն պայմանագրով նախատեսված Լ. իր պարտավորությունները չի կատարել, այն է խախտել է պայմանագրով նախատեսված ժամկետներում կատարել հ 1 Հավելվածով սահմանված Ծավալաթերթ-Նախահաշվով նախատեսված Երևանի Լ. Ազգալդյանի անվան հ. 200 հիմն. դպրոցի 3-րդ հարկի դասասենյակների ընթացիկ վերանորոգման N 32, N 33, N 34, N 35, N 38, N 39, N 40 աշխատանքները, մինչդեռ պայմանագրի 3.4.1 կետի համաձայն Կապալառուն պարտավոր է աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի դեկտեմբերի 3-ին և պայմանագիրը սույն թվականի դեկտեմբերի 4-ի դրությամբ համարվում է ամբողջությամբ լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. Սանթուրյան Արմեն Կարապետի Ա/Ձ-ն ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն հրամանի կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Լ. Ազգալդյանի անվան հ. 200 հիմն. դպրոց ՊՈԱԿ-ի գնումների մասնագետի վրա:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի Լ. Ազգալդյանի անվան հ. 200 հիմն. դպրոց ՊՈԱԿ-ի տնօրենը:

Տնօրենի ժ/պ Ա. Կոստանդյան